Եղիշե Չարենց

Այս աշխարհում իրիկնային, ուր ապրեցիր միայն մի ժամ

Այս աշխարհում իրիկնային, ուր ապրեցիր միայն մի ժամ,
Հրա՞շք էր, սիրտ, հրափթիթ ծաղկումը քո հրաշուշան:

Բայց որբ հոգիս, կարոտիս պես աստեղահև ու խելագար՝
Մի՞ այլ կյանքի փայլ էր կարծես, փա՞յլ էր կարծես, կարծես չկար:

Փայլ էր հոգիս՝ շառագունված իրիկնային քո երազում
Ու կարոտով անմխիթար լույսի մասին երգ էր ասում:

Ու որբ հոգիս քո կարոտում հավերժորեն մխա՛ց, մխա՛ց,
Որպես կարմիր մի ողջակեզ՝ արյունոտված, հրե մի խաչ:

Դու ծաղկեցիր, սի՞րտ իմ, որպես հրափթիթ, կարմիր գարուն
Նա հո՛ւշ դարձած ցնդե՛ց, կորավ իրիկնային այս աշխարհում...